ԾՐԱԳԻՐ
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության միջև 2022-2025 թթ. մշակույթի բնագավառում համագործակցության

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով ամրապնդել Հայաստանի և Ռուսաստանի ժողովուրդների միջև մշակույթի բնագավառում համագործակցությունը,

համաձայն 2011 թվականի հոկտեմբերի 24-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև հումանիտար ոլորտում համագործակցության մասին Համաձայնագրի,

հիմք ընդունելով երկու պետությունների պատմական ընդհանրությունը և Հայաստանի ու Ռուսաստանի կողմից մշակույթների փոխհարստացման գործընթացի հետագա զարգացման շահագրգռվածությունը,

համաձայնեցին ներքոգրյալի մասին.

1. Կողմերը բարենպաստ պայմաններ կստեղծեն կերպարվեստի և բեմարվեստի, կինեմատոգրաֆիայի, գրադարանային և թանգարանային գործի, դեկորատիվ-կիրառական, ինքնագործունեության և կրկեսային արվեստի, պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանման ոլորտներում համագործակցության զարգացման համար:

2. Կողմերը կնպաստեն երաժշտական հաստատությունների և համերգային կազմակերպությունների միջև ուղիղ կապերի հաստատմանը, կատարողների, երաժշտական համույթների և մասնագետների փոխանակմանը:

Կողմերը կխրախուսեն հայաստանյան և ռուսաստանյան կատարողների ու համույթների փոխադարձ մասնակցությունը պետությունների տարածքում անցկացվող միջազգային երաժշտական փառատոներին, մրցույթներին և ավանդական երաժշտական միջոցառումներին, կաջակցեն համատեղ համերգային ծրագրերի և նախագծերի կազմակերպմանն ու անցկացմանը, մենակատարների, ռեժիսոր-բեմադրիչների և պարուսույցների փոխանակմանը:

3. Կողմերը կնպաստեն ուղիղ կապերի հաստատմանն ու զարգացմանը թատրոնների միջև, դերասանների, բեմադրական խմբերի, քննադատների և թատերագետների փոխանակմանը, Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում ներկայացումներ բեմադրելու նպատակով ռեժիսորների հրավիրմանը, ինչպես նաև հյուրախաղերի կազմակերպմանը, մասնակցությանը Կողմերի պետությունների տարածքում անցկացվող միջազգային թատերական փառատոներին:

4. Կողմերը փոխադարձության հիմունքներով կնպաստեն համագործակցությանը և գործընկերության զարգացմանը Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության թանգարանների միջև, գեղարվեստական և ֆոտոցուցահանդեսների, ժամանակակից արվեստի ցուցադրությունների, թանգարանային նոր տեխնոլոգիաների մասին տեղեկատվության փոխանակմանը, ինչպես նաև ուղիղ կապերի հաստատմանը երկու պետությունների ժամանակակից արվեստի թանգարանների և կենտրոնների միջև:

5. Կողմերը պայմաններ կստեղծեն Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսների համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար, կնպաստեն երկու պետությունների մշակույթի և արվեստի կրթական հաստատությունների միջև ուղիղ կապերի հաստատմանը՝ վարպետության դասերի, դասախոսությունների, սեմինարների, ստեղծագործական միջոցառումների և ուսանողական փոխանակումների անցկացման նպատակով:

6. Կողմերը կզարգացնեն համագործակցությունը ժողովրդական արվեստի բնագավառում, կնպաստեն ազգագրական փառատոներին, երգի տոնակատարություններին և այլ երաժշտական միջոցառումներին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ստեղծագործական խմբերի և անհատ կատարողների հրավիրմանը՝ համաձայն դրանց կանոնադրությունների, ինչպես նաև հայաստանյան և ռուսաստանյան մշակույթի ու արվեստի գործիչների, ժողովրդական արվեստի ոլորտի մասնագետների մասնակցությանը միջազգային սեմինարներին և վարպետության դասերին:

7. Կողմերը սույն Ծրագրի գործողության ընթացքում կդիտարկեն փոխադարձաբար Հայաստանում Ռուսաստանի մշակույթի օրերի և Ռուսաստանում Հայաստանի մշակույթի օրերի անցկացման հնարավորությունը:

Նշյալ Մշակույթի օրերի անցկացման ժամկետները, վայրերը, ֆինանսական և տեխնիկական պայմանները Կողմերը կձևակերպեն առանձին արձանագրություններով:

8. Կողմերը համագործակցություն կիրականացնեն կինեմատոգրաֆիայի բնագավառում, կնպաստեն համատեղ նախագծերի իրականացմանը:

Կողմերը կնպաստեն փոխադարձության հիմունքներով հայաստանյան և ռուսաստանյան կինոյի օրերի անցկացմանը, կաջակցեն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կինոյի վարպետների հրավիրմանը Կողմերի պետությունների տարածքում անցկացվող միջազգային կինոփառատոներին և այլ կինոմիջոցառումներին՝ համաձայն իրենց ընթացակարգերի:

9. Կողմերը գրքափոխանակմանն աջակցելու, գրադարանավարների՝ գիտագործնական կոնֆերանսներին, սիմպոզիումներին, գրադարանային գործին նվիրված սեմինարներին մասնակցության միջոցով համագործակցություն կծավալեն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գրադարանների միջև:

10. Կողմերը տեղեկատվություն կփոխանակեն պատմամշակութային ժառանգության հաշվառման, պահպանման, վերականգնման և օգտագործման հարցերի վերաբերյալ, ինչպես նաև կուսումնասիրեն համատեղ վերականգնողական աշխատանքներ, գիտական գործնական սեմինարներ, սիմպոզիումներ, մասնագետների և փորձագետների հանդիպումներ կազմակերպելու հնարավորությունը:

Կողմերը կնպաստեն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պատմամշակութային ժառանգության ուսումնասիրմանը:

Կողմերը կդիտարկեն 2023 թվականին հայկական և ռուսական մշակութային ժառանգության պահպանման հարցերին նվիրված համաժողովի անցկացման հնարավորությունը:

11. Համագործակցության խորացման նպատակով Կողմերը կնախատեսեն պատվիրակությունների և տեղեկատվական նյութերի փոխանակումներ:

12. Սույն Ծրագրի շրջանակներում մշակութային միջոցառումների անցկացման ֆինանսական և կազմակերպչական պայմանները կդառնան համապատասխան կազմակերպությունների և մշակութային հաստատությունների միջև հատուկ պայմանավորվածությունների առարկա: Նշյալ պայմանավորվածությունների հիմնական սկզբունքներն են.

- ուղարկող Կողմը հոգում է իր խմբերի, պատվիրակությունների և կատարողների ճանապարհածախսը, բեռների տեղափոխումը՝ երկու ուղղություններով, իր տարածքում մաքսային ձևակերպումները, հյուպատոսական վճարումները և օդանավակայանի հարկերը, կատարողների հոնորարները, ինչպես նաև բժշկական ապահովագրությունը,

- ընդունող Կողմը հոգում է ժամանող խմբերի, պատվիրակությունների և կատարողների կեցության և սննդի ծախսերը՝ համաձայն իր երկրում հաստատված նորմերի, իր պետության տարածքում ներքին տեղափոխման ծախսերը՝ համաձայն կեցության ծրագրի, անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով համերգային հարթակների և ցուցասրահների տրամադրումը, տեխնիկական և օժանդակ սպասարկող անձնակազմի ծառայությունները, տպագիր-հրատարակչական արտադրանքի ապահովումը, բոլոր տեսակի ԶԼՄ-ներում լուսաբանումը, շտապ բժշկական օգնության ցուցաբերումը:

Թանգարանների հավաքածուներից և ժամանակակից արվեստի ցուցադրությունների փոխանակման դեպքում դրանց անցկացման պայմանները

յուրաքանչյուր դեպքում կհամաձայնեցվեն Կողմերի պետությունների շահագրգիռ կազմակերպությունների կողմից և կամրագրվեն առանձին համաձայնագրերով:

13. Սույն Ծրագրի գործնական կիրարկման նպատակով Կողմերը, ըստ անհրաժեշտության, փոխադարձության հիմունքներով կկնքեն համագործակցության համաձայնագրեր:

14. Կողմերի միջև Ծրագրի կամ դրա առանձին դրույթների կիրարկման վերաբերյալ առաջացած տարաձայնությունները կկարգավորվեն բանակցությունների և խորհրդատվությունների միջոցով:

15. Սույն Ծրագիրը չի հանդիսանում միջազգային պայմանագիր, չի առաջացնում միջազգային իրավունքով կանոնակարգվող իրավունքներ և պարտավորություններ և իրականացվելու է Կողմերի պետությունների օրենսդրությանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև գործող միջազգային պայմանագրերին համապատասխան:

16. Սույն Ծրագիրը կիրառվում է ստորագրման պահից մինչև 2025 թ. դեկտեմբերի 31-ը:

Կատարված է քաղաք Մոսկվայում, 2022 թ. ապրիլի «19»-ին, երկու օրինակից, յուրաքանչյուրը հայերեն և ռուսերեն:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝

Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության կողմից՝